Տիգրան Ձիթողցյան
Հայելիներ

Tigran Tsitoghdzyan
Mirrors

Արտառոց դիմանկարներ. Տիգրան Զիթողցյանի ռեալիզմը

Դոնալդ Քասփիթ
Արվեստի քննադատ, Նյու Յորքի Սթոնի Բրուք համալսարանի արվեստի պատմության և փիլիսոփայության պատվավոր պրոֆեսոր

Ես զգում էի և ի վերջո գնահատում ուրիշի ուրիշ լինելը:
Պատրիկ Քեյսմենթ, «Սովորելով կյանքից. դառնալով հոգեվերլուծող»[1]

Մենք բոլորս ուրիշներին վերաբերվում ենք այնպես, ինչպես որ տեսնում ենք նրանց: Մեր մտքում ունենք մի «օբյեկտ», որը ներկայացնում է ուրիշին, և այդ մի ուրիշին մենք վերաբերվում ենք մեր այդ ներքին օբյեկտին համապատասխան:
Պատրիկ Քեյսմենթ, «Սովորելով կյանքից. դառնալով հոգեվերլուծող»[2]

Տեսանելի հարթությունում Մեկ ուրիշը հայտնվում է որոշակի հեռավորության վրա, այնտեղ, հակառակ կողմում:
Էրվին Վ. Շտրաուս, «Անեստեզոլոգիա և հալյուցինացիաներ»[3]

Ոչ ոք չի կարող տեսնել սեփական դեմքն անմիջականորեն, այն միայն կարելի է տեսնել հայելու օգնությամբ:
Նշանների բառարան[4]

Ինչ կարող ենք ասել Տիգրան Զիթողցյանի «Հայելիներ» շարքի՝ մեծ, համարձակ դիմանկարների մասին, առերեսվելու չափ մեծ, սև-սպիտակ, ինչպես լուսանկարի նեգատիվը, որոնցից կյանքի գույներն ասես առեղծվածային կերպով աներևութացել են մելամաղձոտ անդրաշխարհ: Դրանք հաստատապես գլուխգործոցներ են, որոնցում բնորդուհու ողջ գեղեցկությունն արտասովոր թախծոտ է: Որքան էլ լավ ընկալված, զգայորեն ճշգրիտ և նկարագրական, նրա տեսքն այդուհանդերձ թվում է խիստ անիրական: Ձեռքերը, որ թաքցնում են դեմքը, միաժամանակ թույլ տալով թափանցող աչքերով մոգական կերպով տակից նայել, վկայում են, որ կինը պատրանք է: Երկիմաստորեն թափանցիկ և անթափանց՝ նրա ձեռքերը փոխանցում են այն անորոշությունը, որը նկարիչը «տածում է» իր հերոսուհու հանդեպ:

Արտացոլում
Reflection
2012

Արտացոլում II
Reflection II
2012

Արտացոլում III
Reflection III
2014

Ամբոխը II, 2006
130 x 670 սմ (նկարում՝ 42 մաս 45-ից)
Կտավ, յուղաներկ
Արվեստագետի հավաքածու

The Crowd II, 2006
130 x 670 cm (In the image: 42 parts of 45)
Oil on canvas
On loan from the artist's collection